



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Քաղ. Երևան

12 հուլիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի
Անդամակցությամբ՝ Ֆ.Թոխյանի
Ա. Թունյանի

Ուսումնասիրելով Արսեն Բաբայանի
անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Արսեն Բաբայանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«հակասահմանադրական և ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասին 28-րդ հոդվածի հետ համադրությամբ և 1-ին հոդվածին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի դրույթը, այնքանով որքանով այն վճռաբեկ բողոք ներկայացրած անձի համար նախատեսում է ՄԻԵԴ-ի կողմից կայացված դատական ակտը կցելու ձևական (ֆորմալ) պահանջ»:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթով սահմանված՝ վճռաբեկ բողոքին կից Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված դատական ակտը կցելու պահանջն ակնհայտորեն հակասում է *iura novit curia* սկզբունքին և, հետևաբար, նաև՝ իրավական պետության հիմնարար սկզբունքին:

Ըստ դիմողի՝ դատարանը պարտավոր է տիրապետել կիրառելի իրավունքին, այլ ոչ թե այն պահանջել կողմերից (բացառությամբ օտարերկրյա իրավունքի և օրենսդրության կիրառման դեպքերի): Հակառակ իրավիճակը խարխիլում է դատական իշխանության արդյունավետությունը:

Ղեկավարվելով §Սահմանադրական դատարանի մասին՝ ՀՀ օրենքով և ելնելով ինդրո առարկա անհատական դիմումի և կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրության արդյունքներից՝ գտնում ենք, որ դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ. ինդրո առարկա անհատական դիմումով վիճարկվող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված հարցի վերաբերյալ առկա է ՀՀ սահմանադրական դատարանի 2016 թվականի հուլիսի 12-ի ՄԴՈ-1293 որոշումը, ինչը, որպես գործի քննությունը մերժելու հիմք, ամրագրված է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով §Սահմանադրական դատարանի մասին՝ ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Արսեն Բաբայանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը
մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

12 հուլիսի 2016 թվականի

ՍԴԴԿՈ/1-22